*ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ*

# «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՏԵՔՍՏԻ ՄԻԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

***Բանալի բառեր*** *– միահյուսություն, միագոյություն, խոսք, ճյուղ, Սանասար, Մեծ Միհր, Սասունցի Դավիթ, Փոքր Միհր, ժառանգականություն*

Երբ 1981 թ. վերահրատարակվում է «Սասունցի Դավիթ» էպոսի 1939 թ. համահավաք տեքստը, առաջաբանում Ս. Բ. Հարությունյանը կարևոր մի դիտարկում է անում. էպոսի չորս ճյուղերի «հարակցումը կատարված է ոչ միայն արտաքնապես, սոսկ սերունդների հաջորդականությամբ, այլև վիպական ներքին տրամաբանությամբ և գեղարվեստական որոշակի պատճառակցությամբ»[1]: Այնուհետև նա շարադրում է հինգ վիպական ընդհանրությունները՝ 1. հերոսների ժառանգական-արյունակցական կապ, 2. աշխարհագրական միջավայրի ընդհանրություն, 3. հերոսների նախնիների հատկանիշների և այդ դրանք հարուցող պատճառի, հրեղեն ձիու, առասպելական զենք ու զրահի պարտադիր ժառանգումը հաջորդական սերունդների կողմից, 4. քեռի Թորոսի մշտնջենական կերպարը, 5. վիպական հիմնական կոնֆլիկտի ընդհանրությունը:

Վերջին տարիներին տեքստի միահյուսություն-միագոյությունը բացահայտելուն, ապացուցելուն և փաստելուն ուղղված մեթոդական նորության ենք հանդիպում Հրաչիկ Միրզոյանի՝ Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը նվիրված ուսումնասիրություններում: Հոդվածներից մեկում նա իրավացիորեն արտահայտում է այն տեսակետը, որ «Մատյանի նման բանաստեղծական վիթխարի ստեղծագործությունը... ոչ մի կերպ չէր կարող դիմանալ հազարամյա ավերիչ ցնցումներին, եթե չունենար ոչ այնքան արտաքին, որքան ներքին ամրակուռ կառուցվածք»[2]: Բացի այն, որ Հ. Միրզոյանը մանրազնին ուսումնասիրության է ենթարկում Մատյանի բառային կազմը՝ տարբեր գլուխներում գտնելով հեղինակի ոճային անհատականության դրոշմը կրող բառերի ամենևին էլ ոչ պատահական կրկնություններ, նա նաև ցույց է տալիս, որ պոեմի իննսունհինգ գլուխներից հիսունինը[3] սկսվում են գրաբարում խոսքիմասային նույն պատկանելություն ունեցող

---

[1] «Սասունցի Դավիթ», առաջաբանը, բառարանը և ծանոթագրությունները՝ Ս. Բ. Հարությունյանի, Երևան, 1981, էջ 6:

[2] **Միրզոյան Հ.**, Նարեկացու Մատյանի ներքին կառուցվածքի հիմնախնդիրը // «ԲԵՀ», Հայագիտություն, 2016, թիվ 3, էջ 37:

[3] Նույն տեղում, էջ 39:

բառերով՝ շաղկապներով կամ շաղկապական բառերով, որոնք տեքստի հաջորդական հատվածները միահյուսող-կապող լեզվական միավորներ են. ասել է թե՝ միահյուսվում են ***նույն տեքստի (ստեղծագործության) առանձին հատվածներ (գլուխներ), ոչ թե տարբեր տեքստեր***: Փաստորեն, նա տեքստի միագոյությունն ապացուցում է թե՛ բառապաշարային և թե՛ քերականական իրողություններով՝ մանավանդ վերջիններս առնչելով տեքստի ներքին կառույցին ու բովանդակային էությանը:

Ըստ արժանվույն գնահատելով տեքստին ուղղված մեթոդական այս մոտեցումները՝ հարկ է շեշտել, որ ժամանակի փորձությանը դիմացած, ընդունված և գնահատված տեքստերի միագոյություն-միահյուսությունը կարելի է փաստել նաև լեզվամտածողական-արժեհամակարգային, աշխարհընկալումային իրողություններով:

«Սասնա ծռերի» միագոյություն-միահյուսությունը կարելի է տեսնել աշխարհընկալումային ընդհանրացումների այն շղթայի մեջ, որի առանձին օղակների ստեղծմանը ժողովուրդը հասնում է էպոսի տեքստն աստիճանաբար, ճյուղից ճյուղ զարգացնելու և ամբողջացման որոշակի հանգրվանի հասցնելու սկզբունքով ու ձևով, երբ դրանք՝ այդ ընդհանրացումները, ձեռք բերելով նոր որակներ, դառնում են արժեհամակարգային իրողություններ:

Դրանցից թերևս գլխավորը **ժառանգորդ-ժառանգականության** հիմնախնդիրն է: Էպոսում ճյուղից ճյուղ անցնելով՝ այն զարգանում և սյուժեի վերջում դառնում է ամբողջականացած լեզվամտածողական արժեհամակարգային իրողություն՝ պայմանավորելով ժողովրդի լինելության գլխավոր խորհուրդներից մեկը:

««Սասունցի ծռեր» էպոսում չորս սերնդի պատկանող հերոսները, միմյանց լրացնելով, ավելի ճիշտ՝ միասին մի ամբողջություն կազմելով, արտացոլում են իրենց կերպարներն ստեղծող ժողովրդի պատկերացումները, նրա լավագույն երազանքներն ու ակնկալությունները»[1]. – ահա այսպես է Հ. Օրբելուն պատկերանում էպոսի տեքստային հյուսվածքի ամբողջականությունն ու միագոյությունը: Նրա տեսակետը նախնառաջ մեզ հետաքրքրում է այն առումով, որ չորս սերնդի պատկանող հերոսները «***միմյանց լրացնելով***» են կյանքի կոչում ժողովրդի նվիրական իղձերը: Պետք է շեշտել, որ էպոսում ժողովրդի բյուրեղացրած լինելության խորհուրդներն ու արժեհամակարգային-մտածողական հիմնախնդիրները զարգացում-բացահայտումների են հասնում փուլային եղանակով՝ ճյուղից ճյուղ անցնելուն զուգընթաց: Մեր համոզմամբ՝ մասնավորապես ***ժառանգորդ-ժառանգականության*** լեզվամտածողական-արժեհամակարգային հիմնախնդիրը էպոսում այդ կերպ է ամբողջանում ու լուծում ստանում:

---

[1] «Սասունցի Դավիթ», հայկական ժողովրդական էպոս, նախաբանը՝ ակադ. Հ. Օրբելու, Երևան, 1961, երկրորդ հրատ., էջ 5:

Առաջին՝ «Սանասար և Բաղդասար» ճյուղում եղբայրները սկսում են ճշտել իրենց ծագումը, երկրորդ՝ «Մեծ Մհեր» ճյուղում Մեծ Մհերը մտահոգվում է ժառանգ ունենալու խնդրով, երրորդ՝ «Սասունցի Դավիթ» ճյուղում իր սերմի ծնունդ աղջկանից ստացած հարվածից մեռնում է Դավիթը, և չորրորդ՝ «Փոքր Մհեր» ճյուղում Փոքր Մհերը խորհրդանշական անժառանգության պայմաններում փակվում է Ագռավաքարում՝ այլ խնդիրների հետ կարծես թե առկախ թողնելով նաև ժառանգորդ ունենալ-չունենալու հարցը: Այս «կարծես թե»-ն վերաբերում է էպոսի միայն չորրորդ ճյուղին, քանի որ ժառանգորդ-ժառանգականության հիմնախնդիրն էպոսի առաջին երեք ճյուղերում, յուրաքանչյուրում՝ առանձին-առանձին, բացահայտվում է պատմական-կենցաղային մի որևէ տեսանկյունից՝ զարմը ճշտելու, մինչև իսկ սեփական կյանքի գնով շարունակվելու, այդ շարունակությամբ բարոյականության չափանիշները պահպանելու, իսկ արդեն չորրորդ ճյուղում՝ վերժամանակային-խորհրդանշային մակարդակում ժառանգականությունը հավերժականին հանգեցնելու էպոսի ժանրային առանձնահատկությամբ: Փոքր Մհերի անժառանգ լինելն այլևս կապ չունի զարմը հատկապես ժառանգ ունենալով շարունակելու խնդրի հետ: Այն էպոսում արդեն ստեղծված ու հաստատված արժեքային համակարգի պահպանմանն ու շարունակականությանն է վերաբերում:

Շեշտենք նաև, որ եթե առաջին երեք ճյուղերում նշյալ հիմնախնդիրը գեղարվեստական սպասարկման է ենթարկվում կերպարային մակարդակում, ապա չորրորդ ճյուղում՝ նաև խորհրդանշային մակարդակում, քանի որ Փոքր Մհերը վերջին ճյուղում կերպարից վերածվում է խորհրդանիշի, որպեսզի էպոսի սյուժեի ավարտը չդառնա ու չընկալվի որպես Սասնա տան ավարտ ու անկում, ինչպես, ցավոք, տեղի է ունեցել Ա. Կ. Եղիազարյանի «Սասնա ծռեր էպոսի պոետիկան» ուսումնասիրության մեջ. «Մի կողմից Փոքր Մհերը, անկասկած, Սասնա տան անկման շրջանի հերոսն է, այդ անկման խորհրդանիշը… մյուս կողմից, վեպն ավարտվում է սպասումի մի մոտիվով, լավ կյանքի, արդարության հույսով…, և երկու դեպքում էլ իր մեջ մարմնավորում է պատմական փուլի, ժամանակի շարժման օղակներից մեկի գաղափարը»[1]:

Լավ է, որ համահավաք տեքստում ընդգրկվել են Փոքր Մհերի այն բնութագրական հատվածները, որոնք բխում են էպոսի տեքստային տրամաբանությունից, բայց և ճիշտ չէ, որ հայկական մշակույթի թերևս ամենակարևոր խորհրդանիշներից մեկը՝ Փոքր Մհերը, կապվում է ինչ-որ «շրջանի», այն էլ «Սասնա տան անկման» շրջանի հետ: Պատճառը Փոքր Մհերին էպոսի տեքստում որպես լեզվախոսքային տարր (խորհրդանիշ) չընկալելն է, նրա՝ կերպարից դեպի խորհրդանիշ զարգացումն ու վերժամանակային բնույթը նկատել չկարողանալը: Այս ամենի հետևանքով է, որ Ա. Եղիազարյանը Փոքր Մհերի կերպարում ներքին հակասություն է փնտրում («մի կողմից…. մյուս

---

[1] **Եղիազարյան Ա.**, «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Երևան, 1999, էջ 189:

կողմից….»)։ Ողջն այս արդյունք է այն բացահայտ ոչ ճիշտ մտայնության, թե «էպոսը ստեղծվել և գոյատևել է մի ժամանակ, երբ …Հայաստանում գոյություն ուներ բարձր զարգացած գրավոր մշակույթ, գրականություն, որի մեջ զարգացվող դրույթները մարդու մասին սկզբունքորեն տարբեր էին էպոսի փիլիսոփայությունից»[1]։ Սա առնվազն տարօրինակ միտք է, քանի որ էպոսը ժողովրդի շուրթերին մշտապես ազատ, անկաշկանդ, բազմակողմանի, թող թույլ տրվի ասել՝ ամենաժողովրդավարական, անընդհատական մշակման է ենթարկվել, քանի որ ոչ թե էպոսն է եղել գրավոր մշակույթի ազդեցության տակ, այլ բոլորովին հակառակը. գրավոր մշակույթն է եղել բանավոր մշակույթի (հին ու նոր վեպերի, հեքիաթների, առասպելների, առակների, ասացվածքների և այլնի) խիստ ազդեցության, մեր համոզմամբ՝ նաև վերահսկողության տակ։ Իհարկե չենք ժխտում, որ գրավոր մշակույթն իր հերթին որոշ չափով կարող է ազդել բանավոր մշակույթի զարգացման վրա, սակայն բացահայտ գերիշխանությունը բանավորինն է մանավանդ այնպիսի ժամանակներում, երբ գրին քչերն են տիրապետել, և գրքերի թիվը սահմանափակ է եղել։ Ցավոք, գրականագետին հիշյալ ոչ ճիշտ գաղափարից չի կարողացել ետ պահել նաև Հովհաննես Թումանյանի՝ նրա իսկ մեջբերած տեսակետը. «Ես ուզում եմ ցույց տալ, որ հայ դյուցազնական վեպը, ինչքան էլ պատմական տարրեր ունենա իր մեջ - իրական վեպ չի, որ ***Սասունցի Դավթի վեպը Հայկի առասպելն է***, որ Հայկ ու Դավիթ միևնույն գաղափարն են արտահայտում, որ ***Դավիթ կապ չունի միջնադարյան որևէ Դավիթ Բագրատունու կամ այլ իշխանի հետ***»[2] (ընդգծումները իմն են – *Թ. Տ.*)։

Պատմագրության և էպոսի համեմատություններն անտեղի են, որովհետև էպոսը տվյալ լեզվով ստեղծված տեքստերի բյուրեղացումն է, տվյալ ժողովրդի լեզվամտածողության մեջ արժեհամակարգային խնդիրների հղկումն ու հստակեցումը։ Դրանցից մեկը, ինչպես նշեցինք, ժառանգ-ժառանգականության խորհուրդն է, որ եթե Սանասարի, ապա ավելի շոշափելի՝ Դավթի դեպքում առնչվում է բարոյականությանը, Փոքր Միհրի դեպքում վերածվում պատմական զարգացման պարբերականության խորհրդանիշի, ապա Մեծ Միհրի դեպքում հանգում է հողին ու հայրենիքին։

Այն, որ ժառանգականության արժեհամակարգային հիմնախնդրի արծարծման աստիճանական փուլերը համընկնում են էպոսի ճյուղային բաժանմանն ու զարգացմանը, վկայում է, որ էպոսի հազարամյակին առնչվող գիտական քննարկումներն ու աշխատանքն այս ուղղությամբ ճիշտ ու արդյունավետ են եղել։

Առաջին ճյուղի տեքստում խնդրի հիմնադրումն է. Ծովինարի երկու որդիները ջրածին են և աստվածատուր (գուցե նաև հենց այստեղ պետք է փնտրել կույս Ծովինարի թոռան թոռ Փոքր Միհրի անմահ լինելու գաղտնի-

---

[1] Նույն տեղում, էջ 89։

[2] **Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1999, էջ 274։

քը)։ Տեքստը զարգանում է Սանասարին և Բաղդասարին հետաքրքրող հարցով, թե ով է իրենց հայրը, քանի որ խաղընկեր-հասակակիցները նրանց «բիձ» են անվանում։ Մեկ ընդգծում ևս. չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ Սանասարի և Բաղդասարի ծնունդը էպոսը առնչում է հայերենի լեզվամտածողության մեջ արժեհամակարգային գլխավոր իրողությանը՝ խոսքին. Ծովինարը որդիներին ***խոստանում է*** ասել, թե ով է նրանց հայրը.

Ասաց.-Ո՛րդիք, դադրեք,

Չուր առավոտուն ձեզ կը տանեմ,

Ձեր հոր ***զրուց*** կը տամ[1]։

Հատկանշականն այն է, որ մոր պատմածը որդիներն անվերապահորեն, առանց երկմտանքի են ընդունում, քանի որ իրենց հետաքրքրող հարցի պատասխանը հատկապես «զրուց»-ի (մշակված խոսքի, տեքստի) միջոցով են իմանում. նրանք միանգամից հավատում են իրենց մոր՝ ջրից հղիանալու պատմությանը, իրենց ջրային ծագմանը, որ աստվածային է.

Մենք կը նայինք՝ ***աստվածություն***

Մեզ տվեր է քե[2]։

Երբ Սանասարն ու Բաղդասարը հեռանում են խալիֆի մոտից և իրենց տունն են ուզում շինել, հանդիպում են բարակ առվի, որի ակից խմողը «կտրիճ կ՚ըլնի»[3], և որ հատկապես ժառանգականության խնդրին է վերաբերում,

Էնոր մոտեն ***ազնանցորդի*** կ՚էլնի.

Էնոր տղեք կտրիճ կ՚ըլնին[4]։

Այսպիսով՝ էպոսի առաջին ճյուղի տեքստը ***տուն հիմնելու լինելության խորհուրդը պայմանավորում է ժառանգականության հիմնախնդրով***։ Սանասարն ու Բաղդասարը իրենց տունը պետք է հիմնեին իրենց աստվածային-ազնվազարմ բնույթին համապատասխան վայրում՝ ազնվազարմ կտրիճներ սնող ջրի ակունքին, քանի որ իրենք էլ էին աստվածատուր-ջրածին։

Առաջին ճյուղի զգալի մասը ***զարմ շարունակելու համար*** Սանասարի ու Բաղդասարի ամուսնության պատումն է։

Այդ ճյուղը, փաստորեն, ժառանգականության հիմնախնդրի կարևորագույն կողմին է վերաբերում՝ այն հարցին, թե ովքեր են Սանասարն ու Բաղդասարը, ինչ ծագում ունեն, որն է նրանց զարմը։

Էպոսի առաջին ճյուղի տեքստը ամբողջացնում է ժառանգականության խնդրի արծարծման այսպես ասած ճանաչողական փուլը։

Մեր համոզմամբ՝ երկրորդ ճյուղի տեքստը ամփոփում է ժառանգակա-

---

[1] «Սասունցի Դավիթ», նախաբանը, բառարանը և ծանոթագրությունները՝ Ս. Բ. Հարությունյանի, էջ 14։

[2] Նույն տեղում, էջ 15։

[3] Նույն տեղում, էջ 24։

[4] Նույն տեղում, էջ 25։

նության հիմնախնդրի մեխանիզմի կարևոր բաղադրիչներից մեկը. պատասխան է տրվում այն հարցին, թե ով է ժառանգը, ինչ պայմանների պետք է բավարարի մարդու կենսաբանական հաջորդը, որպեսզի հայերենի լեզվամտածողական արժեհամակարգում կոչվի ժառանգ:

Հիշենք, որ Մեծ Միհրը, Մեծ Մելիքի հետ ունեցած պայմանի համաձայն, գնում է Մսըր և Մսրա տիրուհուց տղա (Փոքր Մելիք) ունենում, բայց էպոսում անժառանգ է համարվում մինչև այն պահը, երբ ծնվում է Դավիթը: Ինչու՞ է այդպես:

Մեծ Միհրի՝ իր երկրից դուրս կատարած քայլերն ի վերջո շրջվում են հենց իր դեմ. Իսմիլ Խաթունից ծնված նրա կենսաբանական հետնորդը՝ Մելիքը, արշավում է Սասունի վրա:

Մեծ Միհրին ուժ տվողը Սասնա հողն է: Երբ նրա ոտքերի տակից բացակայում է հայրենի հողը (նա Իսմիլ Խաթունի մոտ՝ Մսըրում է), կորցնում է իր ուժն ու տարիներ շարունակ, գինու միջոցով թուլակամ դարձած, ապրում է Մսըրում: Հայրենի հողից հեռու ծնված նրա տղան (Փոքր Մելիք) ունի մարդկային թուլություններ և ազնվազարմ չէ, որովհետև «պղտորվել է» **ազնանցորդի սնող ակի ջուրը**: Դա է պատճառը, որ էպոսի սյուժետային գիծը նրան վերադարձնում է Սասուն, և առաջնային խնդիրներ են դառնում մինչևիսկ սեփական կյանքի գնով ժառանգ ունենալն ու աստվածատուր ազնվատոհմի շարունակականությունն ապահովելը: Եվ պատահական չէ, որ Մեծ Միհրը հատկապես Աստծուն է խնդրում, որ իրեն մի տղա տա: Հայրենի հողի վրա՝ հայրենիքում, Աստծու կամքով (այս դեպքում՝ ազնվազարմ) ծնված տղան է ժառանգը. **սա հայերենի գլխավոր տեքստի՝ էպոսի արժեհամակարգային կարևոր հիմնադրույթներից է**:

Մեծ Միհրն ու Արմաղանը «էրթմնակոտոր» են լինում, այդ պատճառով զրկվում են կյանքից, և ավարտվում է էպոսի երկրորդ ճյուղի տեքստը: Ժառանգականության հիմնախնդրին զուգահեռ դարձյալ ի հայտ է գալիս խոսքը՝ որպես հայերենի լեզվամտածողական-արժեհամակարգային իրողություն. երդումը խոսքային բարոյականության բարձրակետն է, և տեքստը ***խոսքի բարոյականության հարցը ժառանգականության հիմնախնդրի հետ համատեղելով է շաղկապում էպոսի երկրորդ ու երրորդ ճյուղերը***:

Այսպես է ժառանգականության հիմնախնդիրը փոխանցվում երրորդ ճյուղ: Դավիթը նույնպես չի կարողանում պահել ***խոսքը:*** Նրա խոսքը դարձյալ խոսքային բարոյականության բարձրակետ՝ երդում է, քանի որ Չմշկիկ Սուլթանի հետ ամուսնական մատանիներով է վավերացվում: Բայց Դավիթը, ամուսնանալով Խանդութի հետ, մոռանում է տված **խոսքը**: Եվ Չմշկիկ Սուլթանից ունեցած իր իսկ աղջիկն է սպանում Դավթին, քանի որ վերստին զանցառվել է արժեհամակարգային պահանջը. ***ժառանգականությունը պետք է խարսխվի բարոյական անաղարտության վրա:***

Այսպես ***ժառանգականության հիմնախնդիրը էպոսի երրորդ ճյուղում լրացվում է բարոյականության պահանջով***:

Փոքր Միհրի կերպարում ***անմահությունն ու անժառանգ լինելը*** փոխադարձաբար պայմանավորված են: Դրանք բխում են բարոյականության արժեհամակարգային հիմնախնդրից. Ագռավաքարը բարոյական-քաղաքակրթական այն հիմնախնդրի առաջադրումն է, որի լուծմանն է նպատակադրված Փոքր Միհրը:

Մարդու ծնունդը և մահը ֆիզիոլոգիական երևույթներ են: Ֆիզիկապես մահանում են և՛ Սանասարն ու Բաղդասարը, և՛ Մեծ Միհրը, և՛ Դավիթը:

Փոքր Միհրի առնչությամբ ֆիզիոլոգիական մահվան մասին խոսելը տեղին չէ. նա ***անմահ*** է: Անմահ է, որովհետև մեղք չի գործում: Փոքր Միհրի անմահությունը պատճառ է դառնում այն բանի, որ չլինի ժառանգի անհրաժեշտություն: Մահը Փոքր Միհրին չի սպառնում, քանի որ նա անմեղ է: Իսկ եթե անմեղությամբ կարելի է խուսափել մահից, ուրեմն վերանում է ժառանգ ունենալու և այդպիսով մի երկրորդ անգամ անմեղությանն ու արդարությանը հասնելու փորձի անհրաժեշտությունը: Փոքր Միհրն ու Ագռավաքարը դառնում են միասնական խորհրդանիշ, և այդ է պատճառը, որ էպոսի տեքստը հենց Ագռավաքարով ***ամբողջանալով*** է ավարտվում:

**Тадевос Тоноян –** ***Выражение переплетённости текста эпоса «Давид Сасунский» в рамках проблемы наследственности***

Переплетённость проверенных, оценённых и принятых временем текстов может быть доказана реалиями языкового мышления. В частности, переплетённость текста «Давид Сасунский» можно увидеть в постепенности поднятия и решения проблем мировосприятия: советы о бытии и система ценностей народа в эпосе развиваются и раскрываются шаг за шагом, поэтапно, параллельно с эпическими ветвями. Это отчетливо проявляется именно в выдвижении и решении проблемы наследника, наследственности. Если в первых трёх ветвях эпоса вышеупомянутая проблема решается на уровне художественного образа, в четвёртой она переводится на уровень символического восприятия, так как в последней ветви Мгер Младший из художественного образа превращается в художественный символ, для того чтобы конец сюжета эпического текста не воспринимался как конец и падение дома и очага Сасунского.

**Tadevos Tonoyan –** ***The Expression of Text Interweaving of the Epic Poem "David of Sasoun" within the Heredity Problem***

The intertwined completenes of accepted and evaluated texts that have stood the test of time can also be indicated by realities in the systems of linguistic thinking and values. In particular, the intertwined completeness in the folk text "David of Sasoun" can be seen in the gradual raising of the problem of the world outlook: in the epic, the nation's idea and problems of thinking in values are developed and highlighted in the order of things, by transitioning from branch to branch. This is clearly manifested especially in the case of setting and solving the problem of heir and heredity. If the heredity problem is resolved at the level of characters in the first three branches, then in the fourth branch it is resolved at a symbolic level, since in the last branch Little Mher transformes from a character into a symbol, in order that the end of the epic is not perceived as the end and fall of Sasoun.